գիւղս, որոյ դաշտային մասը հարաւ կը տարածուի մինչև Ջեմկանայ, Խոշեանայ և Մսուրիի սահմաններն. յարևելից Խօփուզ գետակն, իսկ ի հիւսիս կընկնի լեռնային մասն՝ որ մինչև երկու ժամ տարածութիւն մի կը բռնէ փոքր Սուկաւէտի կողերուն վերայ և որոյ արևմուտքն գտնուող Կոռիս սարերու ստորոտն կը-հասնի։

Գիւղս ունի երկու եկեղեցի, մին կաթոլիկաց՝ միւսը հայոց. կաթոլիկաց եկեղեցին աւելի հին է, սակայն ի ներքուստ զարդարուած է, իսկ հայոցը նոր և անշուք է։

Կաթոլիկաց եկեղեցին կառուցուած է Հասան խա-նի պատերազմներու միջոցին, որ հայոց կը պատկանէր նա և հայեր շինած էին և գրեթէ երկու անձ ի գլուխ հանած են. առաջինն նոյն ժամանակի անուանի Քէշիշ Օղլին. երկրորդն՝ բնիկ Վաղարշակերտցի Օհան աղան։ Վերջինս որմնաշար լինելով՝ իւր ձեռօք հիւսած է։

Բասկեիչի պատերազմին այրուած և Ջեմկան գիւ-ղացի Քէշիշ Օղլիի ձեռօք նորոգուած է։

Կաթոլիկք եկեղեցի չունէին, մի եկեղեցւոյ մէջ մի օրը նախ հայք, ապա կաթոլիկ հայք պատարագ կը մատուցանէին։

Կաթոլիկք նախ Կարսան, Ղարասու, Նաւիկ և Էն. գիւղեր կը բնակէին. տակաւ առ տակաւ հաւաքուեցան գիւղս, զօրացան և կաշառելով նոյն ժամանակի Բահ-լուլ փաշան, եկեղեցին գրաւեցին։

Բարսեղ Մուշեղեան՝ որ նոյն գիւղի բնիկներէն էր և երկրին մէջ անուանի, չկարենալով տակալ կաթոլիկաց արածին, դիմեց Պայազիտ, Կարին, ապա ի Կ. Պոլիս, մի բան չկարողացաւ անել հիւպատոսներու (Ֆրանսա-կան) պաշտպանութեան դէմ, միայն Սուլթան Մէճի-